

«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Զ Ը

**«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

<8) ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմնի եզրակացության համաձայն հնարավոր վտանգ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար>:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

<4) հնարավոր վտանգ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար՝ համաձայն ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմնի եզրակացության>.

2) 2-րդ մասը <Ապաստանի> բառից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

<Ապաստանի տրամադրումը մերժվում է, եթե ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմնի եզրակացության համաձայն ապաստան հայցողը հնարավոր վտանգ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար>:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

Փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց բնակարաններ վարձակալելու համար տրամադրվում է փոխհատուցում՝ Հայաստանի Հանրա-պետության կառավարության սահմանած կարգով>:

Հոդված 4. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել <Հայաստանի Հանրապետություն անօրինական մուտք գործած> բառերը:

Հոդված 5. Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասում փոխարինել <երկամսյա ժամկետում> բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: